

# Գրական Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ \* ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տղազրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ

www.grakantert.am



## ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

...Եվ նրանց ոտնահետքերով սկսվում է պատմությունը:

Այս նախադասությունը հազար անգամ հազար մարդու մասին հազար տարում կարող էր գրվել: Այս նախադասության տեր կարող էին լինել ոչ միայն անհատները: Այս նախադասությանը թիկունք էր պետք՝ ժողովուրդ էր պետք, որ պատմությանը տեր է ու այդ պատմության տակ այլևս չի ճկռելու, ճկվելու ու ճոճվելու: Այս նախադասությունը չի գրվել նաև այլ պատճառով՝ գրող չի եղել: Գիտակցություն չի եղել, որ պատմությունը պիտի իմաստավորվի, որ պատմության դիմաց ու պատմության համար կա պատասխանատվություն, որ պատմությունը քո, իմ, նրա կյանքի շարադրանքը չէ: Գիտակցություն չի եղել, որ պատմությունն ունենում է ոտնահետքեր: Ու մենք հեռացել ենք մեզնից, մեզ խել են մեր բուն կերպ ու կերպարից, մեզ հազգրել են իրենց կերպարը, որ ապրենք իրենց հաճո ու հարմար կյանքով: Եղել է: Եվ եղել է, որ մեր ձեռքով բացել ենք մեր անառիկ ամրոցների դարպասները ու մեր սիրելի թշնամուն ասել ենք՝ արի, քոնն է, արի ու կեր մեզ, մեր բարիքը, վառիր մեր տունը, մենք քեզ արժանի ենք: Թե ինչ-որ խելառ էլ հանկարծ որոշել է դիմադրել, մեր ձեռքով հերն անիծել ենք:

## Պատմության սկիզբն ու շարունակությունը

Ու հիմա՝ Մեղրին: Աշխարհագրական տարածք չէ Մեղրին, հայրենիքի մի բուռ հող չէ: Մեղրին քո տան դուռն է, հայ: Մեղրին քո հացի մայան է: Եվ երբ դու Մեղրին տալիս ես օտարին, քո տան դուռը փակում ես քո վրա: Չգիտեմ՝ ներսից, չգիտեմ՝ դրսից, ու բանալին կախում ես կրծքիցդ: Քանի բանալի կար կախված 1915 թվից: Քանիսը կորավ: Քանիսը մնաց: Իսկ դռները՝ բաց... Տանը հայ չկա: Թուրք-մուրք չգիտեմ, պատերազմ-մատերազմ չգիտեմ՝ համաշխարհային-մամաշխարհային՝ արդարացում հնարեցինք, թիկունքում պահվեցինք, որ չխոստովանենք 1915 թ. առաջ ու հետո ու հիմա տեր չեինք, չեղանք, տեր չենք դառնում մեր տանը: Մենք վախենում ենք մեր ուժից: Մեզ վարժեցրել են ուրիշի ուժից: Մենք ընտիր-ընտիր հպատակ ենք, մենք խելոք-խելոք կատարող ենք, մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ: Հայ մարդ, հիմա ուրիշը դու ես: Քո ուրիշը դու ես: Ու ոչինչ, որ սկզբից, հին սովորույթի, վախի, անվստահության, չգիտեմ էլ ինչի պատճառով դու քո մեջ քեզ թշնամի ես որոնում, գտնում ու ուրախանում, որ մեղավոր կա: Ոչինչ, բայց թող դա արագ անցնի: Դու դրան մի՛ հավատա. դու ճանապարհ ունես, դու տուն ունես, դու որդի ունես: Մի՛ հավատա, թե քո թշնամին քեզնից ուժեղ է: Թշնամուդ ուժեղացնողը քո վախն է, քո ցավն է, քո հիմարությունն է:

Ու հիմա՝ Մեղրին: Ասել, ասում եմ՝ Մեղրին ավելի կարևոր է, քան ցանկացած տարածք՝ նույնիսկ Ղարաբաղը: Մեղրին իր քար ու քոյուղ այս երկիրը դարձնում է աշխարհի հզորներին իր դուռը բերող: Եվ այսօր տալ Մեղրին, թեկուզ դիմացը ծովի ճանապարհի ստանալ՝ սուտ է: Մեծ, համաշխարհային սուտ: Նախ՝ չեն տա, հազար ու մի ձև կա չտալու: Ղարաբաղը ապացույց, որ հողը գրիչով չեն վերցնում: Չեն տա: Եթե տան, ավելի վատ: Որովհետև իրենք շատ են, իրենք այսօր մեզնից ուժեղ են: Տվեցին, գալու են ու մեզ ուտեն: Իրենք թվով: Իրենք տնտեսությամբ: Իրենք փողով: Իրենք խելով: Իրենք շահով:

Ես չեմ վախենում: Ես ոչ մեկից չեմ վախենում: Ես զգուշացնում եմ՝ պատմությունը նաև ավարտվում է ոտնահետքերով: Մեր ոտնահետքերով մեր պատմությունը չպիտի ավարտվի: Եթե տաք Մեղրին, ձեր արյանը խառնում եք այն բենզինը, որը չի թունավորելու, պայթեցնելու ձեր գանգը: Ես զգուշացնում եմ՝ Մեղրին մի օր պայթելու է հենց Երևանի կենտրոնում:

Եվ նրանց ոտնահետքերով պատմությունը մեռնում է: Դարերի մեռած պատմությունը թափ տվեք ձեր հոգուց, մի՛ մեռեք ձեր տան մեջ: Ձեր հոգու մեռելներին թաղեք: Էս երկիրը ձերը չէ, դուք գալիս-անցնում եք, ձերը էս երկրի սիրտը պահելն է: Սիրտը: Ես ձեզ չեմ հասկանում: Ես ձեզնից վախենում եմ, դուք կգնաք ու ձեր զավակների վզից կկախեք Մեղրիի ձեր տան բանալիները, լաց կլինեք, կենաց կխմեք ու կսատկեք կարոտից, բայց զենք չեք վերցնի: Ես ձեզնից վախենում եմ, դուք մեռնին թոյն կխառնեք...

1999 թ. հոկտեմբեր



## Էղվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

### ՀՐԱՏԱՊ ՊԱՀԱՆՁ

Պատերազմի հարաբերական դադարից հետո անցել է 22 օր, և առնվազն զարմանք է հարուցում, որ մեր Ազգային ժողովը չի քննարկում նախապատերազմական վիճակը, ետպատերազմյան իրավիճակը, մինչդեռ բազմաթիվ հարցեր կան, որոնք ժողովուրդն ուզում է պարզել, իմանալ:

Վարչապետի տարբեր խոսքերից, ուղերձներից հետո նոր հարցեր են առաջանում, որոնք բարձրացնում են ՀՀ և ԱՀ նախկին նախագահները, վարչապետները և այլ պաշտոնյաներ: Կարծում եմ, որ եթե հոկտեմբերի 19-ի անվտանգության խորհրդի նիստում հրավիրվել էին նախկին պաշտոնյաներ և քննարկվել էր պատերազմի հետագա ընթացքի հարցը, ապա նոյեմբերի 10-ի հայտարարությունից հետո շեշտակի պահանջ պետք է լիներ՝ հրավիրելու և քննարկելու ի՞նչ եղավ, ինչո՞ւ եղավ հարցերը:


Վարչապետի յուրաքանչյուր ուղերձից հետո, որը նախկին նախագահները համարում են սուտ, իսկ վարչապետը՝ ճիշտ, այդ ստի-ճշտի արանքում խարխափում է ժողովուրդը: Ժողովուրդն ուզում է իմանալ ճշմարտությունը... Այդ իսկ պատճառով Ազգային ժողովը հրատապ պետք է արտակարգ նիստ գումարի, հրավիրելով բոլոր ներկա և նախկին պաշտոնյաներին, ովքեր առնչվել են Ղարաբաղյան հարցի հետ, ինչպես նաև խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունները, որոնք այս օրերին հանդես են գալիս տարաբնույթ առաջարկություններով: Հասարակական կազմակերպություններից և ներկայացուցիչներ ներկա պիտի լինեն, և լրջագույն պետք է քննարկվի պատերազմին նախորդած ժամանակը, պատերազմի ընթացքը, ետպատերազմյան այս ժամանակը: Եվ քննարկման եզրակացությանը տեղյակ լինի հանրությունը՝ գործելու է Ազգային ժողովը, թե՞ ոչ, կմնա՞ վարչապետը, թե՞ ոչ:

Այս հարցերը Ազգային ժողովի հրատապ քննարկելիք հարցերն են, որոնց հանգուցալուծման շուտափույթ պահանջ կա: Հանուն մեր ժողովրդի ապագայի...

**Դեկտեմբերյան այս օրերին մեր հիշողություններից չէր ջնջվում 7 թիվը: Այս դեկտեմբերն ավելի է ծանրացել մեր մեջ Արցախի «երկրաշարժով» (էպիկենտրոնը՝ Շուշի), Քարվաճառի, Բերձորի... ավելի շուտ՝ Հաղրուփի... հետնցումներով:**

\*\*\*  
Մեր հոգու սահմանները դատարկվեցին... Մեր հոգու սահմանները անխրամատ են մնացել... Մեր մտքի զորանոցները քանդվել են... Մեր հավատի սպաներն ու զինվորները դարձյալ իրենց մտքում անտունիներ են մրմռում... Մեր մրմուռը էլի՛ մեզ վերևից շարժեցին... Այսքան՝ ապաշուրհ, այսքան՝ ցինիկ ու այլանդակ վերևներ դարձյալ ինքներս մեզ պարտադրեցինք... Ինքնաանդամահատի նշտարի վրա մեր մատնահետքերն են՝ մեր խղճի այլևս երբեք չմաշող մատնահետքերը...


Մեր Սիրո գետերի ջրերը ինչպե՞ս թոյլ տվեցինք խլելին մեզանից, որ հետո մեր գետերի ջրերը խլեն... Մեր ներսի՛, թե՛ դրսի թշնամին էր աննախադեպ զինված... Մեր դրսի թշնամու դեմ մեր տասնութից քսան, մեր քսանից հիսունհինգ, մեր տարեց կամավոր տղաները անհավասար պայմաններում հերոսացան, իսկ ինչո՞ւ կամովին խաբվեցին մեր տասնութից քսան, քսանից հիսունհինգ, հիսունհինգից տարեց տղաները մեր ներսի թշնամուն...  
Նախ մեր ներսի թշնամին հարձակվեց մեզ վրա հյուսիսից, հյուսիս-արևելքից, արևելքից, հարավ-արևելքից, հարավից... պղծեց մեր հավատքի տաճարները, կողոպտեց մեր մշակույթը, ապա նույնն արեց արտաքին թշնամին... Այս ի՞նչ ներդաշնակ դիվային ծրագրեր էին, ներսի և դրսի ի՞նչ ռազմավարական նույնացումներ: Հիմա մեր հոգու ձգված սահմաններին ովքեր են կանգնելու... Մեր չխաղաղվող հոգու սահմաններին ի՞նչ խաղաղապահներ... Մեր մեջ հազարավոր մարված լույսերի այս խավարում որքա՞ն ենք խարխափելու... Այդ հազար-հազար լույսերի լուսավոր պատկերների ծանր բացակայությունն ինչպե՞ս ենք կրելու մեր մեջ... Ինչպե՞ս ենք դիմանալու նրանց խաղաղված հայացքների փոթորկուն հանդիմանանքին... Մեր մնացած օրերի մեջ մխրճված այս «ինչուի» և «ինչպեսի» հետ կկարողանա՞նք կողք կողքի ապրել... Մի՞թե մենք կոյր էինք... Մի՞թե առաջին օրերից չէր երևում մեր փլուզված այսօրվա ուրվագիծը... Մի՞թե չգիտեցինք, որ ով ինչ չունի՝ դրանով է պարծենում. ողորմելի իր հպարտությամբ, վախկոտն իր «դուխով», պարտվելու եկածն իր հաղթելու դիֆերամբներով... Մենք խաբեցինք ինքներս մեզ, մենք խաբվեցինք մեր ձեռքով մեզ պարտադրած հրեշին... Հրեշը մեր հոյսի, հավատի ու սիրո աղբյուրի սկզբ փակեց (հիմա էլ է փակել) և պահանջեց-տարավ մեզանից մեր ամենաթանկը՝ մեր սրբազան հողը, մեր զավակներին, մեր արժանապատվությունը... Չկա... Երեկն այլևս գոյություն չունի... Հիմա ամեն մի աչքբացումից հետո պիտի ափսոսանք, պիտի չուզենանք նայել իրականության աչքերի մեջ... Պիտի հայիոյենք նրանց, որ հաջողեցին իրենց հրեշավոր ծրագրերը... Հազար անգամ պիտի կկոցած աչքերով հայիոյենք, հետո նոր միայն ոտքներս դնենք մեր մեղքերի ծանրությանը չդիմացող հողին... Այս հողին, որ, արդեն վստահ չենք, կարժանանա՞նք արդյոք... հետո...



Արամ ԱՎԱԿՅԱՆ

## Չխաղաղվող հոգիների սահմանապահները

Հ.Գ. Վաղը կգա չսխալվելու ժամանակը... Մենք չսխալվելու պարտք ունենք մեր թանկ-թանկ լույսերով լուսավորված երկնքին...



Սամվել ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վերջին 30 տարիներին մեր հանրապետության նախկին և ներկա իշխանավորները չկարողացան լեզու գտնել Ադրբեջանի ղեկավարների հետ, փոխզիջումների գնալ և խաղաղ ճանապարհով, առանց արյունահեղության լուծել արցախյան հիմնախնդիրը: Ադրբեջանի ղեկավարությունը որոշեց զենքի ուժով, ռազմական միջոցներով լուծել հիմնահարցը:

2016-ի ապրիլյան քառօրյա պատերազմում Ադրբեջանի ղեկավարությունը, զորահրամանատարները, տեսնելով հայոց բանակի ուժը, մեր ռազմիկների անձնուրաց սխրանքները, հերոսությունը, կռահեցին, որ սեփական ուժերով չեն կարող հաղթել հայ ժողովրդին և դիմեցին իրենց մեծ եղբորը՝ Թուրքիային...

2020-ի ամռանը Թուրքիան զորախաղերի քողի տակ մեծ քանակությամբ նորագույն զինտեխնիկա և զորք

Հայաստանում 1915-1921 թվականներին, այսինքն՝ Հայոց ցեղասպանություն:

Աշխարհի գերիզոր պետությունները, բացառությամբ Ռուսաստանի և Ֆրանսիայի, լուռ և անտարբեր դիտում էին ադրբեջանաթուրքական ագրեսիան, վարձկան մարդասպանների ոճրագործությունները Արցախում երբեմն բավարարվելով «Դատապարտում ենք...», «Կոչ ենք անում երկու կողմերին՝ դադարեցնել պատերազմը» կոչերով ու արտահայտություններով:

Վերջին 30 տարում հայ դիվանագետները չկարողացան աշխարհին լիարժեք իրազեկել արցախյան դատը, հիմնախնդիրը, արցախահայերի ազատ և անկախ ապրելու իրավունքը՝ համաձայն ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքների:

**Եռակողմ համաձայնագրի մասին**

Արցախը բոցերի մեջ էր: Հայ ռազմիկները կենաց ու մահու կռիվ էին մղում ադրբեջանաթուրքական ագրեսիաների, վարձու մարդասպանների դեմ, որոնք ավելի քան 10 անգամ շատ էին թվաքանակով և ավելի լավ սպառազինված: Թշնամին օրեցօր, ժամ առ ժամ գրավում էր արցախյան բնակավայրեր: Շուրջին զավթեցին: Մարտեր էին մղվում արդեն Ստեփանակերտի մատուցներում: Ահա օրհասական այդ ժամին՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի, Ադրբեջանի նախագահների և Հայաստանի վարչապետի ստորագրությամբ հրապարակվեց կրակը դադարեցնելու, զինադադար հաստատելու մասին համաձայնագիրը: Այդ համաձայնագիրը հայերիս համար ստորագուցիչ փաստաթուղթ է, կապիտուլյացիայի ակտ, համաձայն որի՝ հայկական կողմը

# ՀԱՅ ՌԱԶՄԻԿԸ ՉԻ՞ ՊԱՐՏՎԵԼ

մտցրեց Ադրբեջան: Ադրբեջանական բանակը համարվեց տեխնոլոգիական նոր և հզոր զենքերով՝ «Բայրաքթար» կոչվող և իսրայելական անօդաչու թռչող սարքերով, ռազմական մասնագետներով, իսրայելական և այլ երկրների արտադրության զենքերով:

Վերջերս հեռուստատեսությամբ հնչեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետևյալ խոսքը (թարգմանաբար). «Մեր «Բայրաքթարները» հաշված օրերում շարքից հանեցին հայկական տանկերի, հրետանու, հրթիռային և հակաօդային համակարգերի մեծ մասը»...

Այո՛, այսօր ռազմասպարեզում հայտնվել է հրետանուց առավել հզոր, տեխնոլոգիական նոր զենք: Դրանք անօդաչու թռչող սարքերն են, որ օդից հետախուզում են տարածքը, հայտնաբերում ռազմական օբյեկտը, զորքի կուտակումը և կարողանում են ճշգրիտ հրթիռահարել և ռմբակարգել: Այսինքն՝ հեռու տարածքում ծախված ռազմական մասնագետն է համակարգչի մոտ նստած ղեկավարում թռչող անօդաչու սարքի ռազմական գործողությունները, այդ սարքով մարտնչում հակառակորդի դեմ:

Թշնամու անօդաչու թռչող սարքերը վճռական բեկում մտցրեցին արցախյան 44-օրյա Հայրենական պատերազմում ի վնաս մեզ: Այդ պատերազմում հաղթեց իսրայելական և թուրքական արտադրության տեխնոլոգիական նոր և հզոր զենքը:

- Մենք չպարտվեցինք, մեր զենքը պարտվեց,
- Պարտվեց մեր խակ դիվանագիտությունը,
- Մեր քաջ ռազմիկը կռվեց անձնուրաց,
- Մենք չպարտվեցինք, մեր զենքը պարտվեց...

**Աշխարհի անպարբերությունը**

Արցախյան 44-օրյա Հայրենական պատերազմում ադրբեջանաթուրքական ագրեսիաները և հազարավոր վարձկան մարդասպաններ աշխարհի աչքի առաջ սկսեցին հայաթափել Արցախը, կազմակերպել նոր ցեղասպանություն: Զօր ու գիշեր հրթիռահարվում, ռմբահարվում էին Ստեփանակերտը, Շուշին, բազմաթիվ այլ քաղաքներ ու բնակավայրեր: Ադրբեջանական զինուժը կիրառում էր կասետային ռումբեր, քիմիական զենք, արգելված այլ զենքեր ու զինամիջոցներ: Զոհվեցին տասնյակ անմեղ, անզեն քաղաքացիներ, ռազմաճակատում հազարավոր հայ ռազմիկներ:

Կատարվում էր այն, ինչ կատարվեց Արևմտյան

Ադրբեջանին է զիջելու մեր ազատամարտիկների կողմից ազատագրված (գրավված) շրջանները, բացի այդ՝ Շուշի քաղաքը, Հադրուբը, արցախյան այլ բնակավայրեր: Թույլատրվում է Թուրքիային Սյունիքի տարածքով ավտոմայրուղի կառուցել, այն Նախիջևանը միացնելու է Ադրբեջանին: Թուրքերը ցանկանում են իրականացնել իրենց վաղեմի երազանքը՝ ստեղծել Թուրքիա-Նախիջևան-Ադրբեջան կարճ ճանապարհ:

Փառք Աստծո, ռուսական խաղաղապահ ուժերը եկան: Արյունահեղությունը դադարեցվեց, փրկվեցին Ստեփանակերտը, հազարավոր հայ զինվորներ ու սպաներ, որոնց թշնամին ցանկանում էր շրջապատել ու ոչնչացնել:

Հայ ժողովուրդը զայրոյթով ու ցասմամբ, տխրությամբ ու ափսոսանքով ընդունեց Արցախի պարտության լուրը, այն պահանջներն ու պարտականությունները, որ կատարելու է հայկական կողմը՝ ըստ համաձայնագրի: Շատերը դավաճան անվանեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որ ստորագրել էր այդ նվաստացուցիչ փաստաթուղթը:

Մնում է հուսալ, որ առաջիկայում կայանալիք բանակցությունների ընթացքում կլրամշակվեն, կխմբագրվեն համաձայնագրի հիմնադրույթները՝ ի նպաստ հայ ժողովրդի:

**Փառք հերոսներին**

- Հազար ափսոս ասենք, հազար փառք ու պատիվ,
- Հերոսներին հայոց՝ օրինանք հազարապատիկ,
- Հերոսներին հայոց՝ երգեր անմահության,
- Հավերժությունն անմահ մեր Արարատ լեռան...

Երբ ղողանջեցին հայոց կոչնակները, երբ հայրենիքն ազդարարեց՝ ի զեն, հայե՛ր, հայրենիքի պաշտպանությանը կրկին զինվորագրվեցին մեր պանծալի երկրապահները, բազմաթիվ կամավորականներ:

Առաջնագծում այնժամ մեր 18-20 տարեկան զինվորներն էին, որ մարտնչեցին առյուծի նման և շանթահարեցին գրոհող «գորշ գայլերին» ու վարձկան, սիրիական պատերազմում թրծված փորձառու մարդասպաններին: Աշխարհը զարմացավ, քրիստոնյա աշխարհը հիացավ, որ Արցախի փոքր Հանրապետության

Ծարունակությունը՝ էջ 8



Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

Երբ բանաստեղծ, դրամատուրգ Սամվել Կոսյանը հարցրեց՝ ի՞նչ վերաբերմունք ունես հեռավար զրույցին, պատասխանեցի՝ դրական:

Բայց ժամանակն այլ չափումների մեջ էր ոչ միայն ինձ, այլև բոլորիս համար (հայերիս նկատի ունեմ): Այլ տրոփներ կային, որ ինձ՝ իմ

# Ամենամեծ

գիտակցական «ես»-ին ուղղորդում էին դեպի միասնական հաղթանակ գաղափարին: Զգայական «ես»-ս անորոշության ու «պատերազմ» ցավալի երևույթի խառնարանում էր: Գիտեք՝ ինչքան երանելի էր հնչում «հաղթելու ենք» պատգամը, և այսօր որքան ցավազին է նրա արդեն շոշափելի արձագանքը...

Միշտ ասում եմ, այս անգամ էլ հաստատեմ ինձ համար խորթ են թեական, ենթադրական վիճակները: Ոչ մի կամ... կամ, ոչ մի եթե... Թերևս այդ ընկալման գերակայությունը և Աստծո անբացատրելի էներգիան ինձ ուժ տվեցին կյանքիս ամենադժվար ու անելանելի պահերին՝ լինել: Այդ օրերին ավելի պինդ զգացի, որ միայն իմ ուզելով չէ (հաղթանակ՝ անվանենք պայմանական), որ բարեկամ-դրկից պիտի ուզենան, եղբայրս, քույրերս պիտի ցանկանան, ընկերներս՝ նույնպես... Ահա այսպիսի դաշնակիցներ ունենալու պարագայում բացառված է, որ դու պարտվես: Սա անձնային մակարդակով, իսկ տիեզերականն ինչքան զորավոր կարող է լինել, երբ պայմանը միասնությունն է, ազգային արժեքների հանդեպ սրտողո գնահատանքը, պատմամշակութային ժառանգության պահպանումը, հզոր պետության և հզոր բանակի գոյությամբ: Թվարկածս յուրաքանչյուր արժեքի ու միավորի կողքին ես ամրագրում եմ սերը, անընդհատ սերը:

Չեմ հուսահատվել... Էլ վերջ, արդեն վերջ. ցավի ծածկագիր վերձանողներ մասնք:

Ահա առաջին հարցը.

**Սամվել Կոսյան - Հայտնի է, երբ թնդանութներն են կրակում, մուսաները լուռ են: Մերօրյա պատերազմական իրավիճակով պայմանավորված, իսկապես մուսաները լուռ են...**

**Սոնա Անտոնյան -** Լուռ են: Իմ տարածքում լուռ են:

Իմ պարագայում լուռ են:

(Մտքերի զորաշարժ, թույլ տամ՝ դասավորվեն): Հիմա չեմ ուզում ճանաչել էդ մուսային, մի ընդհանուր բան ունենալ նրա հետ: Գրում եմ, երբ չի հորինվում, երբ գիտեմ, որ զգացածս անվերադարձ թղթին է, նրա ճերմակ հանգրվանը, կամ որ տեխնոլոգիական կախվածության դարում ենք՝ պայմանական տիրույթը: Զգում եք, չէ՞, ինչ սիրուն է ստացվում, սիրուն ու անսթեքեթ է պատմվում: Իսկ գիտե՞ք՝ այդ ամենն ինչպես է ներսս քերծոտում ու ինչքան, մինչև խոսքային շափկն առած՝ գնում է քեզ-նից ու այլևս քոնը չէ, ասես չեք էլ ճանաչել միմյանց:

Հ Ա Ր Յ Ա Չ Ր Ո Ւ Յ Յ Ա Ռ Ի Թ Ո Վ Ե Վ Ա Ն Ա Ռ Ի Թ

Արդեն որերորդ անգամ են կրակում թնդանոթները: Պատերազմը վաղուց այլևս բառ չէ, այս անգամ էլ եկավ ու բախեց մեր դռները, եկավ ու զարկեց մեր սրտերին... Արցախյան 2-րդ պատերազմը: Ի՞նչ անել... Սա 1988-1994 թթ. գոյամարտը չէ, այլ ավելի կատարելագործված, ըստ ռազմագետների՝ 5-րդ սերնդի պատերազմ էր, ըստ իս՝ վայրենի, որովհետև զոհվում է մեր տեսակը՝ իմ սահմանումով՝ ժողովրդիս զմրուխտն ու լոյսը: Քմահաճ աշխարհի մի կեսը լռում է, մյուսն՝ անհանգստանում: Եվ որքան զարգացած են պատերազմի միջոցները, նույնչափ անմարդկային ու դաժան են հետևանքները: Ի՞նչ անել, երբ կյանքը, կորոնավիրուսային սահմանափակումներով կյանքը վերածվում է դրվագների. թիկունքում հանուն զինվորի, իսկ առաջնագծում՝ հանուն Արցախի ու հայրենիքի: Ի՞նչ գրել, երբ պատերազմը լկտիաբար կրկին գողանում է մեզնից մեզ... Կարծում եք՝ եթե գրվի, ցավը կփոքրանա՞, պատերազմը կհեռանա՞... մենք միմյանց ավելի շատ կսիրենք, քան

**Ս. Կ. - Պատահում է, որ գրելիս բառերը չենթարկվեն, և կիսատ թողնեք ասելիքը:**  
**Նման ընդվզումը ո՞ր դեպքում և հոգեկան ի՞նչ իրավիճակում է հնարավոր:**  
**Ս. Ա.** - Հնարավոր է, երբ անհնար է շոշափելի դարձնել այն, ինչ դու ես զգում և ինչպես դու ես շարունակելու՝ հընթացս խռովքիդ պատկերաշարը լուսապատճենելով: Հստակ գծանցումները քեզ կմոտեցնեն ընթերցողիդ, որքան էլ կտրուկ ու դժվար ճանապարհներով տանես նրան: Չասվածը՝ շատ, բայց ապրումն էլ՝ ահագնացող: Մեծ հեղեղի դեպքում կարող ես կանգնեցնել հոսքը: Գիտակցաբար կանգնեցնել: Ափսոսանք-պատրանքը հեռանում է դեպի թաքստոց (տևական հիշողության), դու՛ ասացողը, բառեր չունես, լռություն է... Կգա բխումը՝ ուրիշ շապիկ հագած, բայց ինչպես միշտ պարզ, անսեթևեթ:  
Այսպես. չգրված զգացողությունների, չշարունակված խմորումների անսքող պատկերներով թղթապանակ ունեն՝ մեծ ժամանակագրությամբ (դեռատի տողերից մինչև իմաստության շավի-

# ԼՐԱԹՅՈՒՆՆ Է... ԲԱՌԸ

կատենք թշնամո՞ւն... Ո՛չ: Ի՞նչ բանաստեղծություն... Առայժմ ինչ էլ ասում եմ՝ նախևառաջ ինձ եմ դիմում, հորդորում եմ, զսպում, լռում, նաև լռություն եմ խնդրում: Պատմության ոչ մի դաս այդպես էլ լիարժեք չյուրացրինք: Երբ հաղթում էինք, Նժդեհին էինք վկայակոչում, երբ չէինք ուզում պարտվել, Մոնթեի խոսքերն էինք կրկնում, երբ պարտվեցինք, Խրիմյան Հայրիկի «Թղթե շերեփի» քարոզն էլ վերհիշեցինք... Ու երբ բոլորը բոլորին մեղավոր ու դավադիր կանչեցին... Այդ կարևոր «ինչո՞ւ»-ն ոչ մեկին պետք չէր: Վերստին ամփոփում եմ հայոց խիզախության դասն անԳիր է:

Ես այս պատերազմի մասին չեմ գրի, ինչպես չգրեցի 1988 թվականին (պատմության մեջ՝ Սպիտակի երկրաշարժ) վերապրածս, երբ քաղաքս բաց վերք էր... չգրեցի...

Այսօր մեզ ապրելու համար են պետք մուսաները. մարտի դաշտում վիրավոր ընկերոջը չլքող զինվորը, մինչև վերջին վիրավորին առաջնագծից դուրս բերող բժիշկ-զինվորը, իր զինվորների համար կենդանի պատնեջ դարձած հրամանատար-զինվորը և դարձյալ զինվորը...

Իմ զինվորը միշտ հաղթում է: Իմ գիտցած Հայը միշտ նվիրյալ է:

**Ս. Կ. - Ձեր պոեզիան եթե երկխոսություն է, ապա ո՞ւմ հետ...**

**Ս. Ա.** - Նաև երկխոսություն է. մեկ հասցեատեր, երկու-երեք, շատ կամ քիչ: Երբ գրում եմ, չեմ մտածում այդ մասին: Երկուսով այդ պահին մեկ ենք, հետո կարևոր է՝ նա կուզենա՞ լսել ինձ, հասկանալ, լռել ինձ հետ ու սպասել. ժամանակը ցույց կտա: Գրում եմ՝ չքոնանալով գլխումս բլթբլթացող մտքերին: Այո՛, ոչ մի արտառոց վիճակ. տիեզերքում մի ՀԱՐՑ է հնչել (երկու-երեք, քիչ, շատ...) անհիշելի ժամանակներից, և մենք՝ տարբեր կերպ ու տարբեր գործիքներով հենց այդ ժամանակներից էլ պատասխանում ենք տիեզերական հարցին՝ ասպետավարի ու նրբավար, սիրահոժար ու բիրտ, հեզոտ կամ զվարթ, զգույշ կամ կրքոտ՝ երբեմն կոկելով ասելիքը, երբեմն ծածկագրելով, ավելի հաճախ՝ բաց ու արձակ... Բաց և արձակ, որտեղ ամենաճիշտ նշանը (խորհուրդը) սերն է: Ահա այսպիսի զարմանալի ազատություն է շնորհել ինձ Աստված: Այո՛, ամեն պատասխան հասցեատեր ունի. օրեր, տարիներ շարունակ չբարձրաձայնածդ մի օր կգրես, որովհետև սխալ չէր հապաղումը, և ճիշտն էր այն ժամը: Վերջապե՛ս... վերջապե՛ս: Սրա անունն էլ բերկրանք է:

ըր բռնած մտքեր՝ լի, լի ու անավարտ... Քիչ-քիչ վերացնում եմ, միանգամից չի ստացվում. լավ կազան կլինեի վառարանի համար: Սկսեցի 2019-ի գարնանից. ամեն օր դարակից վերցնում եմ սովոր փաթեթն ու գլորվում եմ հետ՝ երբեմն մեկ տողի հետ, երբեմն մի քանի, նույնիսկ մեկ բառ ու մի ամբողջ A4 թուղթ (սրանք ճեփ-օւլա-յած չեն, ավելի թեթև ու բարակ են և մեր մաշկի գույնի): Կարդում եմ՝ սովորական մի տող ահա. «Հույզերի մրցավազքը թողած՝ շրջվում եմ քո աչքերի գծած շառավղով. ո՞վ կիմանա՞ դեպի սիրտ տանող անոթներում ի՞նչ ռեակցիա է տեղի ունենում...». թվագրված է 1998, օգոստոս: Կամ՝ «Երբ արև կա, ես ամենագեղեցիկն եմ...» (1990) և այլն:

Տետրեր էլ կան. քրոջս՝ Սաթենիկի դարակից թոշրած նոթատետրն էլ: Շապիկի նկարը ծաղկունք, արև է: Դպրոցականներ էինք: Նա թեորեմներ ու բանաձևեր էր նշել, իսկ ես էջերը ծալեցի ու բանաստեղծություն գրեցի՝ մտածելով զգայական ավելի հարմար է, քան թվայինը: Քոյրս իհարկե չհանդուրժեց, և մեր չարաճճի զգվտողի արդյունքում բանաձևերն էլ, բառերն էլ ծվեն-ծվեն եղան:

**Ս. Կ.- Ձեր վերջին՝ «Եվ» խորագրով գիրքը լույս է տեսել 2004 թվականին: 16 տարի է անցել: Նման երկարատև դադարը «նահանջ» է երգո՞ւմ, թե՞ պատճառն ավելի խորքային է...**

**Ս. Ա.** - Մի թանկ լրացում՝ նաև «Դառն ու զվարթ»-ը: «Սուգամներ» (1999), «Եվ» (2004), երրորդը՝ «Դառն ու զվարթ»-ը լույս տեսավ 2018-ին «XXI դար. հայ պոեզիա» մատենաշարով: Իհարկե, այս գրքի գողտրիկ տարածքում չընդգրկվեցին Ձեր ասած երկարատև ընթացքի բոլոր գործերը, այնուամենայնիվ եղև լույս, և այդ լույսը կա: Գրքի մասին եղել են անդրադարձներ...  
Նվիրել եմ ընկերներին, գրողներին, ում հանդիպել եմ, երբ հարմար է եղել: Իսկ ընդհանրապես դառն ու զվարթ գրքերիս մի կապոց տանն է... պահարանում:  
Բառն ինձ բաց չի թողել, ոչ էլ ես եմ խռովել նրանից. հոսել ենք, հոսել՝ երբեմն մեղմասաց, երբեմն պոռթկուն... Խորհրդավոր ոչինչ չկա, ընդամենը տեխնիկական խնդիրներ են՝ հրատարակությանն առնչվող: Ո՛չ կազմակերպիչ եմ, ո՛չ էլ՝ նախահարձակ այդ ոլորտում:  
Յուրաքանչյուր գրքիս հետևում կյանքիս կարևոր ու դժվարին, բայց ոգելից փուլ է մնացել, լուսավոր, ուժեղ անհատների ներկայություն: Ես հաղթել եմ ոչ միայն, որ համաձայն չեմ պարտությանը, այլև, որ ուրիշ ընտրություն չի տրվել ինձ:  
Այժմ լռություն հարկավոր կլինի, հարկավոր կլինի լռել...



**Ռուզան ՀՈՎԱՍԱՓՅԱՆ**

## Իմ խփված տողեր...

\*\*\*  
Թռչունի  
Հակասիշը  
Գնդակն է,  
Բայց նրանք  
Երկուսն էլ թռչում են...

Եվ Աստված չանի,  
Երբ գնդակներն են թռչում-  
Նրանք կտուցներին  
Երբեք ծղոտ չեն տանում  
Բույն հյուսելու.

Նրանց բույնը-  
Զինվորի սիրտն է...

\*\*\*  
Պատերազմը պետք է  
սիրահարվի ինձ-  
Ես պետք եմ նրան:

Պատերազմը պետք է  
սիրահարվի ինձ,  
Եվ ես նրան մոռանալ կտամ  
Իր բոլոր պոռնիկներին  
Ու կհիշեցնեմ  
Փշեպսակով երեխաների  
մասին  
Եվ նրանց փոքրիկ խաչերի...

Պատերազմը պետք է  
սիրի ինձ...  
Նա չի էլ իմանա՝  
Ինչպես է իմ  
ճերմակ մարմինը  
Դառնում իր խիղճը,  
Ինչպես է խաղաղվում,  
Որ ցնցվի  
Որբացած երեխաների  
աչքերին նայելիս...

\*\*\*  
Իմ հայրենիք,  
Քո ամեն զինվորի համար  
Մի բանաստեղծություն  
ունեմ,  
Որ թշնամու գնդակը  
Իր վրա է առնում...

\*\*\*  
Դուք իմ բառի միջով  
Պիտի տուն վերադառնայիք,  
Իսկ դուք իմ տան միջով  
Բռնում եք  
երկնքի ճամփան...

Իմ խփված տողերը,  
Իմ խփված տողեր...

Բառերս ինչպե՞ս են  
Ինձ հարություն տալու,  
Որ ձեր մասին  
Գրեմ...

\*\*\*  
Իմ հայրենիքը  
Հրթիռներն են հարվածում,  
Իմ հայրենիքը  
Ինքնաթիռներն են  
ուբակոծում  
Եվ...  
Աշխարհի լռությունը...

Եվ ամենից շատ արյուն  
Աշխարհի լռությունը  
Ետ մղելիս ենք թափում...

\*\*\*  
Աշուն է...  
Կարմիր աշուն է...

Ես վիրակապ եմ դնում  
Հայրենիքիս վերքին  
Ու չեմ հասցնում փոխել-


Կարմիր,  
Կարմիր աշուն է...

\*\*\*  
Ես անզոր եմ գրել  
Պատերազմի մասին-  
Ինձ իմ երզը բերեք...

Իմ երզն էլ խաչ ուներ,  
Իմ երզն էլ էր քայլում  
Գողգոթայով սրտիս,  
Բայց իմ սիրտը մեկ-մեկ  
Կանաչ դաշտ էր դառնում-

\*\*\*  
Այս ձմեռ  
Ձյունը  
Միայն մայրերի  
Մազերին կիջնի,  
Իսկ ճամփաներին  
Խուլ  
Ուտնաձայներ կիջնեն,  
Որ միայն մայրերը կլսեն...

Ու մի պահ  
Մայրերին կթվա,  
Թե որդիները  
Երիցուկներ են շարում  
Իրենց մազերին...



ՀԳՄ վարչությունը շնորհավորում է բանաստեղծ ԱՐՁՈՒՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ծննդյան 70-ամյակի առթիվ «Գրական թերթը» միանում է շնորհավորանքին

Ծափ ու թմբուկ զարկենք՝ Աննան ծայններ է լսում Եվ ծոպքերը քսում է հողին:

\*\*\*

Ծաղկել է փշատենին: Օղը բուրում է զիգզագ: Ես երկունքում եմ:

Տարվա այս ժամին սակավախոս է ագռավը: Օրվա այս պահին մերկ-մորեմերկ է լուսնյակը: Իմ բաճկոնից էլ պոկվեց-ընկավ կոճակ:

\*\*\*

Եկել եմ նուռ գիշերով, Գիշեր չէ՛ նռան գինի, Բախում եմ դղրոյունով, Եկել եմ, ճամփա բացիր:

Գիշեր ես՝ մնա գիշեր, Հաշիշը խմեմ ծոցիդ, Աչքերիդ թուրմի վրա Որ շինեմ եկեղեցի:

Ունակերով քո շուրթերի Բարձրանամ խաչը ծոցիդ, Երկնային աստղանկար Շարեմ կրծքիդ լուսայգի:

Եկել եմ նուռ գիշերով, Գիշեր չէ՛ նռան գինի, Բախում եմ դղրոյունով, Աստվա՛ծ իմ, ճամփա բացիր:

\*\*\*

Երեք աղջիկ անձրևի տակ արթնացան, Երեք աղջիկ մազերն իրենց քանդեցին, Երկրի վրա ծիածանը մահացավ, Երեք աղջիկ խարոյկի մոտ արթնացան:

Մեկը ստեց՝ Երկրի վրա ոչ մի արև չի տեսել, Մեկը նստեց ու իմ կողքին ծերացավ... Խարոյկի մոտ ես ոչ մի խոսք չսասցի. Երրորդն ինչո՞ւ անձրևի տակ մահացավ:

Երեք աղջիկ երեք երազ դավեցին՝ Երկրի վրա գուցե արև չի եղել, Մեկը ինչո՞ւ կողքիս նստած ծերացավ, Երբ երրորդը անձրևի տակ մահացավ:

\*\*\*

Ջահելությունն իմ իսկ, կոյր ամա, Վայելույ՛ ինչպես Վարդ Գողգոթայի. Իմն է դեմքը գեղեցկության՝ Ես ընկղմվում եմ հատակը գարշապարի, Նժարում բերքը աշնան՝ ցամաք աչք:

Կոտրատվում է լճում լուսինը՝ կիթառ, Կիթառ՝ Սիրո տուն, տուն քարկոծված, Պարանոցիս հարմար է շատ զգացումը պարանի, Նոյն առոյգությամբ մեղունները բրդոտ Տրվում են ծաղկին օրինության:

Խորանում է անհատակ պատկերը կայուն, Շուրջը՝ նվազ, շուրջը՝ աղ, վրան՝ տերև. Սիմֆոնիայից դուրս, բառի երակը մտել՝ Սուրում է կոյր ամպն իմ ջահելության:

ԹԱՔՍՈՑ

Հրաշք երկիր, Ժապավենը մազին Ջվարթ երեխա, Ես ուրախ եմ, իմ կենսագրությունն է այստեղ, Ես ուրախ եմ, այստեղ հաստափոր գրքեր կան: Ինձ ծաղկաբաժակներով բերին, Ես շեղբերով եկա, Իսկ Աննան, Աննան կոյս է մինչև հիմա:

Ի՛նչ թաքստոց, իսկը՝ թոնիր, Երկիրը՝ շուրթին գաթա, Իմ կենսագրությունն է այստեղ, Այստեղ հաստափոր գրքեր կան, Ճնճողները սնվում են լուսնի սաղարթով: Բաց են դռները երկնքի, Իսկ Աննան, Աննան ծոպքերն է կարկատում Եվ ինչ-որ ծայններ է լսում:

Ինձ ոգևորում է հացթուխը, Ոգևորում է ջութակահարը, Փշատենին ծաղկել է, Օղը բուրում է զիգզագ... Հնչեցրու ժամը, թող գա դերձակը, Իմ սիրտը լուն կերավ, սիրտս լուսնափ է, Հազիվ էր ծվարել երկիր-թռչնակը, Երբ հնչեց ժամը, երբ եկավ դերձակը, Ի՛նչ վայելույ էր օղը, օղը վայելույ էր, Ջուր շաղեմ՝ չփակվի աչքերիս դռնակը: Ինձ հացթուխն է ոգևորում, Ոգևորում է ջութակահարը, Ծաղկել է փշատենին, Օղը բուրում է զիգզագ...

ԹԱՅ ԱԶԲԵՐՈՎ ԿԱՆԱՅՔ

Լիք, թաց աչքերով կանայք, Երախտապարտ եմ: Մորեմերկ էին. Լու էր, խոտ թե ճառագայթ Մնցավ սրընթաց: Հիմա ուր արտասվեն նրանք՝ Լիք, թաց աչքերով կանայք:

Կար ժամանակ, գոգնոց կար, Կար կարաս: Երբ տազնապարտ էի հիվանդ տողերիս համար, Գալիս սթափվում, սփոփում էին նրանք՝ Մեր սիրասուն կանայք:

Լիք, պարարտ կոնքերով կանայք. Հաջողություն էր. մորեմերկ էին: Շան տղերքն էլ բզեզ դարձան, Ասին՝ չեկան: Հիմա որ սթափվեն՝ Լիք, պարարտ կոնքերով կանայք:

Լիք, ձիգ փորերով կանայք (Ամռան տապը գլուխը քարն է տվել), Լերկ քարերի սարսուռով նրանք բարձրացան, Օգոստոսին էլ մայր դարձան, Լիք, ձիգ փորերով կանայք:

ԱՆԻՐԱԿԱՆ ՎԱՐԴ

Շոգ, անիրական օր: Սրսփում են վարդերը:

Ամենանուրբ զգացումից այն կողմ Սրսփում են վարդերը...

Ահա քայլում է աղջիկը՝ վարդեր կոխկրտելով, Ահա ես ծածանում եմ թաշկինակս, Ահա վանականը՝ մորուքն է սանրում, Փայտոջիլները վխտում են մարագում:

Սրսփում են վարդերը:

Երեխաները սպասում են գեղեցիկ օրվա՝ Երազներով լի, նուրբ օրվա, Այգուս վարդաստանով, Երկնքի ջրով:

Սրսփում են վարդերը, վարդերը սրսփում են:

Մինչդեռ գալիս է պարոն որդը, Անիրական որդը- Անիրական լաստերով, Աներևակայելի անակնկալ...

Սրսփում են վարդերը, վարդերը սրսփում են:

\*\*\*

Եկա ձայնի ելևէջով Այս երկիրը աղ ու հացի:

Ես ասացի՝ մազերիս մեջ աստղ է այրվում: Ես ասացի՝ մարմինս եմ ես քո հուշերի: Հայրս եկավ մշուշներից, Գարունը բիր՝ հառնեց վրաս, Չհասկացա օծուն լեզուն, Չլսեցի խոսքը ծաղկի. Խոտերը ինձ նախատեցին, Փաթաթեցին ամպ ու ցավով: Մայրս էր կանգնած աշնան դեղին խաշամի մեջ, Ուսին՝ սափոր, սափորում՝ խեժ. Երեխաներ անցան խումբ-խումբ Սուլիչներով, մտրակներով... Սկիզբը ինձ տվեց ծաղիկ, խոտերի խաղ, Ոտաբորիկ ուղեկցեցի ես ջրերին: - Սիրտս մղեղ... Այն փառահեղ սափորներին երկնագնաց Կկարոտեմ այսուհետև: Եկա ձայնի ելևէջով Այս երկիրը աղ ու հացի. Ես ասացի՝ մազերիս մեջ աստղ է այրվում, Ես ասացի՝ մարմինս եմ ես քո հուշերի:

ՕՐԸ ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՄՇՈՒՇՈՒՄ

Լևոն Խեչոյանին

Ես իմ ճերմակ քաղաքի բնակիչն եմ: Որտե՞ղ է վարագույրը, դեղին մուժի վարագույրը: Ծաղիկների երկինքը երազի տխուր աչքեր չեն, Հոկտեմբերը՝ աղ ծաղիկների թերթերին: Ես եմ՝ իմ քլթաթաթոցով ընդերքից, Ես եմ՝ ակնապիշ: Ես ընդունում եմ օրը՝ օրը տենդ-մասրենի: Արևը կայունության մի կետ ունի, Մեր պապակ երկիրը հիմա ծածկված է անտառներով, Ուր գայլերը քնում են ստվերներում, ինչպես արևածաղկի գլուխ, Իսկ ճանճերը ձու են դնում լուսնի տակ: Հա՛: Երեխաները թող պարսատիկով ծնվեն, գլուխները՝ առաջ, Ճիչը՝ ջուր,- Անաղարտությունն իր գոյնն ունի: Հուզմունքս՝ թիթեռ:- Ես որտե՞ղ եմ: Եթե պատռեմ կուրծքս, Թանաքաման-սրտի փոխարեն Մի քրքրված ցանցազամբյուղ է: Հիմա արդեն ասում եմ գիծ ու նշան, Դժխեմ իմ երևակայություն, Իմ մանկական ձեռքերով կապված լճակ: Շոգը շատ է շոգ, Մի քայլ այն կողմը անտառ է, Մուժը՝ վարագույր: Ու ես հարցնում եմ, Ես գալիս եմ հավիտենական քնից Ու հարցնում եմ. Լապտերները թևատակիս, Լուսատիկ աչքերիս, ականջներիս, Ես միայն հարցնում եմ,- Ո՞ր է թռչունը, որ կոպերիս տակից թռավ, Կտուցին՝ ելակ: Թևերը՝ կրակ, պոչը՝ կրակ, Իսկ ծղրտոցը... Երկիրը՝ կրակ, ու վայրէջքի տեղ չկա, Ես գալիս եմ հավիտենական քնից հետո, Իմ քլթաթաթոցով ընդերքից, Ու հարցնում եմ՝ Ուրիշ ի՞նչ կարող եմ անել: Մեր պապակ երկիրը հիմա ծածկված է անտառներով, Ուր գայլերը քնում են ստվերներում, Ինչպես արևածաղկի գլուխ:

09.11.2006 թ.

ՎԱՅ, ԾՈ

Վահան Թամարյանին

Մեղքի նուռը ուսած, խելոտուքի Տոնին, Առ նամակս, Սա՛նչո, տար Դուլսինեային: Հասցես հիշիր, տղա՛ս, Քավարանի ծաղիկ, Ո՞րն է մեղքս, Սա՛նչո, որ վայում են՝ ծո, ծո... Ծո, աչքերս գիտես՝ թիթեռներ են լուսնի, Մե՛րթ տղա եմ դառնում ու մե՛րթ՝ ծաղիկ: Ուրվական եմ կարծես խոր վերքերի ցավից, Հիմա ես ո՞ր գնամ, ուր էլ գնամ՝ վա՛յ ինձ: Ջաղացքար է վրաս, առավոտը՝ խարան, Բառ-աղունս այլուր՝ թիթեռների թևին: Սա՛նչո, նամակս տար անձրևի տակ կարդա, Որ էջերս մոխիր ինձ չվայեն,- ծո, ծո...



Նորայր ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ԱՌԱՋՆԱԳԻԾ

#### ՋԱՋՈՒՌ

Ուր հոսում են ջրեր, խոսում քարը, ուր շողում են դաշտեր արևածին, նայիր, թե ինչպես է սազում դարը էն թխտու ու սևաչ գառնարածին:

Նա այս կիրակի դաշտերից հերթով մոմեր կհավաքի, ինչպես ծաղիկ, կանցնի ուխտյաց հոծ ու խոնարհ երթով ու բույրեր կշարի կանաչ դաղձից:

Ու շաղոտ, յոթնագույն մի հին վրձին կհուրհրա երկնում, սրբի դիմաց, կերկնի, կներկի՝ փառք տո՛ւր մըզի ու մեր հայրենիքին հողմահալած:

Ու վրձնե մոմեր կհոսեն դեպ ցած, ու խաչե՛ր, խաչե՛ր դեպի երկինք, քանի՛ խաչեր են վրձիններ դարձած, քանի՛ վրձիններ են խաչերին հիմք,

երբ հոսում են ջրեր, խոսում քարը, երբ շողում են դաշտեր արևածին, նայիր, թե ինչպես է սազում դարը էն թխտու ու սևաչ գառնարածին:

#### ԷՆ, ՈՐ

Էն, որ ոչինչ էս օրդ դարձնում, էն, որ չես խոսում ջրի հեքի հետ, էն, որ գարնանից բան չես հարցնում, էն, որ չես հիշում ոչ մի արահետ,

ուրեմն փողը աչքիդ է դրած, բայց դու տեսնում ես ուրիշ մի լույսով, բուրդ՝ ոսոխի սրտի մեջ խրած, կուրծքդ՝ զարդարուն արեգնալույսով:

\*\*\*

Պարկուճներով լցված թռչնի փխրուն սիրտ, լազուրներով լցված թռչնի թև ու աչք, սև ձգանին ցուցամատի ստվեր բիրտ, գահավիժող, գահավիժող թռչնե խաչ:

#### ՎԵՐՋԻՆ ԿՌՈՒՆԿ

1  
Էն թռչնի աչքից միշտ լաց էր կաթում, երբ չվում էր այդ երկրի տարածքով, հայացքներ՝ բարի ճանապարհ մաղթում, ու նորից դիմում հոգեցունց հարցով:

Ի՞նչ ասեր, երբ իր հարազատ նախնիք առանց պատասխան թևաբեկ եղան, ինքն էլ ակամա դարձավ մի գաղտնիք, ու երկինքն իրեն՝ մեծ զոհասեղան:

2  
Դատարկ ճամպուրակների մեջ հայրենիքի բույրն էր, այնտեղ, հեռվում չէր բուրում ոչինչ: Բոլոր մաքսակետերը փակ էին դատարկ ճամպուրակների համար. երբ հանկարծ ճամպուրակներից ծլարձակեցին ու միանգամից ծաղկեցին ծիրանը, փշատը, խաղողը: Այդպիսի երազ տեսա, որովհետև քնելուց առաջ

աղբարկը քչփորոզը մանկան սայլակով տանում էր իրեն պիտանի ապրանքը, նաև մի ջուֆակ, որ ծնված օրից «Կռունկ» էր նվազել, իսկ կռունկները շրջանցում էին հնամյա տարածության երկինքը, որ խուսափեին տհաճ հարցերից:

#### ԱՍԵՍ

Մի թռչուն գիտեմ, որ տեղանք չունի, ու մի գնչուհի՝ թափառ քամու պես, ես ծվարել եմ գետի հին հունին, ու քո հայացքը այս ջուրն է ասես:

Մի արև գիտեմ, որ դադար չունի, մի վերև՝ առանց աստղի ու ամպի, ես ծվարել եմ ուսին անհունի, կարծես՝ երկնային լուսավոր թամբին:

Ներքևում չկաս, վերևում չկաս, թամբը տիեզերքով սահում է կամաց, ու այն ծեր գնչուն՝ քիչ խելապակաս, ասում է՝ նայիր, թռչունն ուր սուրաց:

Մի տարածք գիտեմ, որ անուն չունի, բայց ջրե՛ր, ջրե՛ր, ջրե՛ր լուսավոր, ու աչքերի մեջ թախծոտ գնչուհի արտացոլվում է պատկերը ծանոթ:

Մի թռչուն գիտեմ, որ տեղանք չունի, ու մի գնչուհի՝ թափառ քամու պես, ես ծվարել եմ գետի հին հունին, ու քո հայացքը այս ջուրն է ասես:

#### ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԳ

Ես համբուրեցի սոսափը ծառի և արծաթածածկ սաղարթը նրա, մի շշուկ եկավ հեռու անցյալից՝ հագի՛ր անցյալս, երազկո՛ւր տղա:

Ես համբուրեցի բույրը կածանի և վաղնջական հեքերը նրա, մի շշուկ եկավ հեռու անցյալից՝ քայլի՛ր հեքերիս, թափառի՛կ տղա:

Ես համբուրեցի ծալքերը լույսի, թաքուն շոյեցի վարսերը նրա, մի հայացք եկավ հողածին ուսիս՝ գրկի՛ր լույսերս, ասողածի՛ն տղա:

Ես համբուրեցի գույնը երկնքի, աստղեր շարեցի կածանի վրա, մի շշուկ եկավ էս թափառ երգից, շողաց էն ծառի սաղարթի վրա:

#### ԵՍ ՄԻ ՀՈՎԻՏ ԳԻՏԵԻ

Ես մի հովիտ գիտեի, որ ժպիտներ էր քամում ցավից, և ջրերում նրա ոլոր աստղեր էին հոսում ծավի:

Նրանք մի օր անձրևի հետ իջան հովտի տաք ծերպերին, հետո գտան մի արահետ ու հոսեցին հին վերքերին:

Եվ շողացին խոտ ու ծաղիկ, հուրհրացին թուփ ու մեղու, շուրջը ծաղկեց մի թաց շաղիկ, ջուրը կանաչ լույս էր հեղում:

Առավոտ էր, ու վերքերին ճերմակ թուն էր իջել մեղմիկ, ու հողի տաք ընդերքներից լույս էր ելնում՝ դեղի՛ն-դեղի՛ն:

Եվ լույսի մեջ համատարած աստղիկներ են հերթով բեկվում, ու ծերպերից մամռակալած ժպիտներ են ցավից երկնում:

Ես մի հովիտ գիտեի, որ ժպիտներ էր քամում ցավից, և ջրերում նրա ոլոր աստղեր էին հոսում ծավի:

#### ԱՐԱՐՈՒՄ՝ ՑՈՐԵՆՈՎ ՈՒ ԳԻՆՈՎ

1  
Աստղիկները թեք զարդ են պեծկլտուն, ու ջրերը հեգ՝ խոսող զարդուղի, մեկն ինձ դարձրեց երազների տուն, կախեց պատերին հողե իր հյուղի:

2  
Հյուղը ցորենի գույն է շողացող, ու ճանապարհը՝ դուռը անհունի, մեկը դռան դեմ դառնորեն լացող. թե՛ ճանապարհը ինչո՞ւ վերջ չունի:

3  
Ջարկերակներ են ջրերը հոսող, հողը՝ խլրտուն լույսի բանալի, մեկն ինձ դարձրեց լռությամբ խոսող բառերի հանգով անիմանալի:

4  
Հանկարծ շողացի հյուղի պատերից, և արարումի լույսը բարակեց, ու նախամարդու արարած կավից նախնական գինին հանկարծ վարարեց:

5  
Ջրնգուն ցավ է, թախիծ՝ մեղմօրոր, ցորենի վրա գինին է հոսում, և ամայության դաշտերը բոլոր կարմիր ու ճերմակ լույսով ակոսում:

6  
Բառերի հանգով անիմանալի հոսում եմ գինու, ցորենի վրա, և կավի վրա իմ զարմանալի աստղեր են իջնում՝ լույսով հուրհրան:

7  
Մեկը թրծում է կավը իմ նորից, մեկը գծում է իմ մարմինը թեք, գինի է հոսում իմ անոթներից, ցորեն՝ ձեռքերից ու մազերից շեկ:

8  
Այս ճամփաներին ես նոր անցորդ եմ, մախաղս՝ դաղձով և ուրցով լցված, այն զարմանալի երկրի ճամփորդն եմ, ուր սահմանները ցավից են գծված:

9  
Գնում եմ, գալուս օրը չգիտեմ, ցորենհատիկն է ինձ ճանապարհում, տե՛ս, այն Լեռնուհին հոնքերը կիտել, բայց վերադարձի աղոթք է անում:

10  
Աստղիկները թեք զարդ են պեծկլտուն, ու ջրերը հեգ՝ խոսող զարդուղի, մեկն ինձ դարձրեց երազների տուն, կախեց պատերին հողե իր հյուղի:

#### ԿԱՊՈՒՅՏ ԱԶՔԵՐՈՎ ՄԻ ԱՐՑԱԽՈՒՇԻ

Կապույտ աչքերով մի արցախուհի կամարների տակ աղոթք էր անում, պատերը հույսով լուսե անհունին աղջկա անբառ աղոթքն են տանում:

Աղջի՛կ, թափառի՛ր երկնակամարում հոգիների հետ անաղարտ ու սուրբ, ոտքերդ մաշի՛ր աստղերի ծովում և վերադարձի՛ր երկրիդ գիրկը լուրթ:

Ու երբ ծխից զատ, արյունից այն կողմ գիրկդ կվազի բոցե մի մանուկ, քո փոքրիկ երկրին կիջնի ծաղկեհողմ և անցյալներիդ՝ լուսե մի անուն:

#### ԱՆՈՐՈՇ ՀԱՍՑԵՆԵՐԻՑ

Ես ինձ նամակներ էի գրում անորոշ հասցեներից: Ինքս ինձնից նամակներ էի ստանում անորոշ հասցեներից: Ծրարները լիքն էին նամակներով, որ գիշերները ստանում էի անորոշ հասցեներում: Ծրարները լիքն էին օրերով,

որոնց վրա հոսում էին իմ երազների գույները:

Ես ինձ տանում էի այդ օրերի միջով, և ժամանակը խաղում էր գույների հետ, և գույները ներկում էին դարպասները, և գույները ներկում էին պատուհանները:

Եվ դարպասները երազներ էին տեսնում գունավոր, և պատուհանները երազներ էին տեսնում գունավոր: Եվ դարպասներից ու պատուհաններից գույները թափառում էին ժամանակի մեջ, և հասցեներ գրում վայրկյանների, օրերի, անգամ դարերի համար:

Ես ինձ նամակներ էի գրում անորոշ հասցեներից, ինքս ինձնից նամակներ ստանում անորոշ հասցեներից գունավոր դարպասների, գունավոր պատուհանների, և գույների հետ խաղացող ժամանակների մասին:

#### ՆՈՒՅՆ ՏԵՂԸ

Ես նույն տեղն եմ վերադառնում, նույն կածանով, նույն անցյալով, ուր լույսի հետ սեր են շաղում ու տարածում ոսկե մաղով:

Եվ այսօրը սեր ու լույսից, նեկտարով է խմոր դառնում, և մատներով անհուն Հույսի նշխարի պես թոնրից հառնում:

- Ո՛ր էիր, որ կարոտը քո լուռ թշնամ էր քարափներից, և այն դալար բարդու ներքո կաթկթում էր թախի՛ծ, թախի՛ծ:

Եվ օրերը համբերատար, և ջրերը երկնափեշից մնում էին մերկ ու դատարկ, հոսում էին կակի՛ծ, կակի՛ծ:

Ես նույն տեղն եմ վերադառնում, նույն կածանով, նույն անցյալով, նույն լույսի հետ սեր են շաղում ու մաղում եմ ոսկե մաղով:

#### ՀԱՍՑԵ

Հոխ քամիները, կարկուտը, ժլատ անձրևները, շոգ ամառը և չորացած խոտերի միջով սողացող օձի պոչը կանաչ ասում են՝ անհոգ եղիր, այս վայրերը քեզ չեն լքի:

Եվ խնդությունը, և ժամանակի բոլոր ծալքերով հոսող դեղին թախի՛ծ, և հայացքները անբաժան, և կարոտը սահմնկեցուցիչ, և արևը՝ մշտապես թեքված հարավի դաշտերին, ասում են՝ անհոգ եղիր, այս վայրերը քեզ չեն լքի: Ի՛նչ էլ լինի քամու, կարկուտի և անձրևի հոտը, ինչ էլ լինի ցամաքող առունների վրա կախ ընկած ժամանակի ժանգը և մրկը՝ ցորենհասկի կողերի մեջ սևացող, ասում են՝ անհոգ եղիր, այս վայրերը քեզ չեն լքի:

Մնում է առավոտյան հոսել ցամաքած առուններով, հոգնած արևի հետ կախվել հարավի դաշտերին, ցորենհասկի հետ աճել ժամանակի մրուրի մեջ, կանգնել ամենաբարձր քարափին, պարզել ձեռքերը և բարձր ձայնով ասել՝ ինչ էլ լինի, ինչ էլ լինի, այս վայրերը ինձ չեն լքի:



Արմենուհի ՄԻՍՅԱՆ

Մուգիլ. «Ճշգրտություն և հոգի»

Կգա ժամանակ այս ջրերի երեսին, որն իրականում ժամանակի երեսն է, կսառչի իմ ժպիտը, որ սպասումի թարգմանն էր, ու թռչունները կչվեն ջերմ տարածքներ միայն նրա համար, որ չսառչի ժպիտը... Դու կարող ես բանաստեղծություն կամ երգ համարել ձայնը, որ հոսում էր երեկվանից դեպի վաղը, ու ժպիտն էր նրա բոլոր կետադրության նշանները... Որոշումները, որ մենք համարում ենք իրականություն, ոչինչ են ջրերի կայուն հոսքի առջև... Թռչունները հեռանում են, որ ժպիտը չսառչի, մարդիկ՝ երբ սառչում է այն... Կուզես՝ բանաստեղծություն կամ երգ համարիր այն, որ ես կուզեի թռչուն լինել... Չկա ճշգրտություն, չկա հոգի...

«Ձոն ճամպրուկիս» շարքից

Ճամպրուկս՝ որպես պատրվակ, լուրջ դեմքով հավաքեմ, որ գնամ այնտեղ, ուր երկնքի չափ կապույտ է սերը, սիրտս ուզում եմ երկինքներով տալ, այդ գույնից ներքևում չկա երբեք, իսկ վերևներում լիքը սեր է... Ճամպրուկս առնեմ, լուսաբացին երկինք թռնեմ...

Մի վերջին հայացք գցեցի ճամպրուկիս. այնքան խեղճ թվաց, երբ օդակայանում արագ մեզ բաժանեցին իրարից... Ջինսերիս, զգեստներիս արանքներում լավ ու վատ օրերի կանխատեսումներն էին նաև, գրված ու նոր գրվելիք տողերս, սպասումներս ու վախերս՝ լիքը «վերջերով» ու «ամենինչնորիցներով»... Կհանդիպենք կրկին, երբ երկինքներով կանցնեն. կբացեմ, տեսնեմ՝ փոխվե՞լ է ինչ-որ բան...

Իսկ ճամպրուկս ինձնից առաջ անցավ՝ մենակ, ինձնից բաժան. ում հետ քայլել եմ ձեռք ձեռքի

ու վստահել շատ բան, բայց մխիթարվիր, ընկե՛ր իմ. երկինքներով միասին պիտի անցնենք ու հետո նորից կմիանանք...

Մենք բաժանված ենք նորից, գիտե՛ս որքան էր սիրտս թրթռում, երբ բազում օտար ճամպրուկների դեմքերի մեջ քեզ չէի գտնում... Բայց ահա եկար՝ հանդիսավոր, դանդաղ, ես դիմավորում եմ քեզ, ու սիրտս ցնծում է քեզ համար, ճամպրուկ իմ՝ միակ, հավատարի՛մ...

Սպասում: Օդակայան: Ամեն բան ճիշտ է: Ամեն բան ապրված: Լավ է, երբ տուն հասնելու համար պիտի անցնել երկնային ճանապարհներով... Դեպի օդակայան Գիշերը կվերցնեմ ճամպրուկս, մենությունս կհավաքեմ սենյակիս բոլոր անկյուններից, կխցկեմ կարճ ու երկար շորերիս մեջ, թող ճմրթվի. մինչև երկինքներով չտամ մենությունս, խելքը գլուխը չի հավաքի: Դեպի օդակայան...

Գինի

Ինչ քաղցր է ժպտում այս հասուն խաղողը. մի օր մեկը հաստատ հարբելու է նրանով...

Չգիտեմ՝ որքան օրեր բարի լույս կասեն ինձ դեռ առավոտվա անշաքար անկեղծությամբ ու կստանան ինձնից լույսը բարի իրենց հասանելիք, բայց հաստատ կխտովի ինձնից մի ուրբաթ կամ գուցե հինգշաբթի, թե չընդունեմ նրան հանկարծ կամ ընդունեմ փակ աչքերով ու չսպրեմ նրա հետ մինչև գիշեր, երբ հողը բացի իր սիրտը իմ առջև, ու ես տրվեմ նրան շաբաթ կամ գուցե՝ կիրակի...

Քո ստերից ու փչոցներից, քամի՛ տերևներն ընկան հատիկ-հատիկ, իսկ ծառն իր տեղում է՝ մերկորեն ազնիվ... Ինչ կատարյալ է ազնիվ մերկությունը ծառի...

Երբ վերադառնաս, նա էլ չի լինի, կլինի ուրիշ մեկը, որ չէր ուզի հեռանալ օրերի, ամիսների միջով, բայց այդքան լուսաբացներ ու գիշերներ անցան նրա միջով, այդքան թռչուններ չվեցին ու չվերադարձան, այդքան ջրեր անցան նրա դեմքով ու այտերից մաքրեցին հետքերը մատներիդ...

Թե ուզում ես գտնել նրան, մի՛ վստահիր ժամանակին, թռչուններին ու ջրերին, հավատա քեզ միայն. վերադարձի՛ր:

Պատժված հրեշտակները երկրում շարունակ երկնային սեր են փնտրում: (Տեսնես երկրայինը փնտրողներ կա՞ն երկինքներում...) Բարեգո՛ւթ դատավոր, չգիտեն նրանք՝ հեզ պատժվածները, որ չեն գտնելու...

Անհոգի բառերից՝ նետված այս ու այն կողմ, մոլախոտեր են աճում... Ինչ ազնիվ հոգի ունի այն գեղեցիկ վարդը...

Առավոտ ծեփին թռչունը գլխիս քարոզ էր ճովողում. - Տեսա՛ր, որ ասում էի, ի՞նչ ես գտել մարդկանց մեջ, դե հիմա գնա՛ մեռի՛ր... Ստիպված էի քնած ձևանալ. ի՞նչ ճիշտ էր ասել թռչնի որդին...

Լուսաբացին, երբ երկինքը բացվեց, ես հիշեցի ինձ, ում թողել էի հուշի հեռաստաններում ու մոլորվելով՝ սերտաճել մի տխրության ծառի... Երբ հիշեցի, ծառը ծաղկել էր արդեն... մի ճյուղ քաղցեցի ինձնից, որ ինձ վերադարձնեմ (ինչպե՞ս) լուսաբացին...

Նորից ինձ ջերմացնողը բաժակս եղավ, ուր թեյը բերնեբերան նվիրում է շուրթերիս իր հավատարմությունը տաք, գունե սիրահարվելի՛ թեյին...

Այսօրն էլ ապրվեց, մի օրով էլ մոտեցա մահին... այնպես արագ ենք ապրում, ասես մեր կյանքի նպատակը մահն է...

Չհասկացո՛ւմ. թյուրիմացությունը գուցե մեղմ է քեզ համար, կոպիտ ես դու ու շատ հաճախ՝ դեմքով տղամարդու: Չհասկացո՛ւմ. և օրվա թևերը լուռ փակվում են, ցերեկով մթնում ու ցավ՝ օրից երկար, ու ցավ, ու ցավ... Ինչ-որ տեղ՝ հեռվում, դներն են քրքջում...

Table with 3 columns: Author info (ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ (2020 Թ.)), Book title (Միքայել Նալբանդյանի անվան մրցանակ (հրապարակագրություն)), and Publisher info (Գրքերը (2020 թ. հրատարակված) ներկայացնել Հայաստանի գրողների միություն մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը: Արդյունքները կամփոփվեն 2021 թ. փետրվարին: Գրքերը հանձնել Հայաստանի գրողների միություն (Բաղրամյան 3)՝ ՀԳՄ գործերի կառավարիչ Հեղինե Նազարյանին: Հեռախոս՝ 56-45-70:



Լևոն ՍԱՀԱՎՅԱՆ

Հոգեմաշ կասկած, ահի զգացում, ճաքեր են զցում երազները հեշտ, Անօրենները դեռ դիմանում են Ու պճնազարդում դիմակները գեշ...

Ինքնազսպումի որոշումներից Ո՞րն էր ճշմարիտ և ո՞րը սխալ, Ա՛խ, ազնիվ մարդու հոգեռոնտը Մի՞թե դժվար է վերևում անսալ...

Կոշտ դատաստանի ե՞րբ կարժանանան Բիճ գավակները ձգվող խավարի. Տե՛ր ու մարգարե՛, օգնական եղեք, Արդարության է ազգս ծարավի:

Հպարտ քարափի պոնկին ահոտ Կրկին ծաղկել է, զուգվել մասրենին, Նայելով նրան՝ չես ուզի խոսել Կյանքի անկատար լինելու մասին...

Խոնարհ ու բարի իմ մարդու տեսակ, Զսավաճությունը ընկեր է անգին, Մի՛ մերկացրու հոգիդ մինչև վերջ, Ծովն ինչքա՛ն գաղտնիք ունի հատակին...

Պարզին պարզապես մերկ են հասկանում, Ամեն խելոք քեզ կասի այդ մասին, Նայի՛ր, նրբաթերթ ծաղիկների հետ Ի՞նչ սուրձայր փշեր ունի մասրենին...

ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՇ

Պետականության հարգը չգիտենք Ու դաս չենք առնում առաջվա նման, Արաքսից անդին Էրզիր ենք թողել, Տրվել վեճերին ներազգայնական...

Մեր «վերջին խելքը» ե՞րբ կգա առաջ, Ու մեր մենք-ը ե՞րբ կհաղթի ես-ին, Հիշե՛ք, հարգում ու չեն համարձակվում Հեզնաբար խոսել ուժեղի մասին...

Ժամանակները նոր բան չեն հուշում, Վաղն էլ կհաղթի զորեղը միայն... Արաքսից անդին Էրզիր ենք թողել, Տրվել վեճերին ներազգայնական...

Պա՛հ աննախընթաց, հրաշալի ես, Ինքնահատուկ ես, հոգեհմա, Ես հիացմունքից ընդարմացել եմ Եվ մրմունջներ են լեզվիս վրա...

Ի՞նչ սիրարկու է այս գեղեցկուհին, Ու վարակիչ է խինդը նրա, Ճերմակ մարմինը, Ճայն ու նազանքը... Լոյս հրեշտակ է երկրի վրա...

Պա՛հ աննախընթաց, հրաշալի ես, Անըջային ես, հոգեհմա, Ես կարկամել ու ես քարացել եմ, Չգիտեմ ինչ է լեզվիս վրա...

ԶԳՋՈՒՄ

- Գնանք,- ասում է,- աշխարհի ծայրը, Չէ՞ որ դու էիր ուզում մի օր, Ես այն ժամանակ պարծենկոտ էի, Եսապաշտ էի, խելացնոր...

Անծայրածիր է թախծի աշխարհը, Ուրախությանը՝ մի օազիս, Հաճախակի են մղձավանջները Կրծում կողերը երազներին...

Քո շունչը միշտ էլ ինձ կյանք է տվել, Իզուր տարիքը մեջտեղ բերիր, Ա՛խ, պահեիր ինձ, թեկուզև ուժով, Միամիտիս էլ մի կերպ ներիր...

Գնա՛նք, իմ ասպե՛տ, աշխարհի ծայրը, Ու թող հեքիայթը վերջ չունենա, Ես այն ժամանակ պարծենկոտ էի, Հիմարիկ էի, երկնագնա...

Որոնում էի ինձ ամենուրեք, Որոնում էի համառ, անընդմեջ. Ու միայն երեկ գտա վերջապես Աշխարհի ցավով հիվանդների մեջ:

Արևկա օրով հավքերն իմ այգում Ճովողում են հա առանց դիրիժոր, Մարդու մեկին այն հաճույք է վերին, Մյուսի համար՝ ծանծրայի ժխոր:

Ես չեմ հիշում, թե ապրել եմ այլ կյանքով, Այն մի հատ է, մի անգամ է, մի դարով, Թող ոչ մեկը ինձ ահ չտա իր ահից, Ամեն մի բան կվերանա իմ մահով:

ԱՐՏԱՌՈՅ ՕՐ

Օրն արտառոց է այսօր մի տեսակ, Ամպերը ծանր են, մտքերը՝ թեթև, Զգալ է տալիս ցավը կենսունակ, Երեսուն տարի անցել է թեև...

Ստվարանում է մոլոր կարկամած, Արցունք է կաթում երկնքի աչքից, Նորից հուշերիս մատյանն եմ թերթում, Եվ ինձ պատում է կաչուն մի թախիծ...

Կլլում է խավարն ամեն ուրվագիծ Ու վերջին պատառ ամպե կարմիրը, Ահ է ներշնչում փոթևոտ կայծակի Անընթեռնելի կրակագիրը...

Օրն անսովոր է այսօր մի տեսակ, Կյանքս եմ դիտում էկրանին նրա, Խինդ ու քրքիջ է օրորոցիս շուրջ Եվ լաց են լինում շիրիմիս վրա:

Ասես ապրում ենք խարխափումներով, Կոյրի՛ ճանապարհ գնալու նման, Իրար անհաղորդ և օտարոտի Ու թմբիրի մեջ մշտնջենական...

Անցնում է կյանքը աճապարանքով, Կողմնորոշվելը դյուրին չէ էլի, Եվ մշուշոտված հիշողությունը Մեզ գիրկն է հրում կասկածանքների...

Մարդը՝ տագնապի, վախի ճիրանում, Բայց և՛ եսամոլ ու զուլխազովան... Չէ՛, մոլորուն է մեր կյանքն իսկապես, Կոյրի՛ ճանապարհ գնալու նման:

Ծանր պայքար է իմ ու իմ միջև, Հաղթողը ես եմ, պարտվողը՝ ես, Այս ի՞նչ ուժ է, որ ներսս կրծում է, Ուզածս անում է, մտում անտես...

Խառնակչին ե՛րբ եմ հայտնաբերելու, Հանելու իր մութ թաքստոցից, Կողքից ոչ մեկը տեղյակ չէ սրան, Զի չի երևում կողքից ոչինչ...

Կյանքը մի անել, բարդ լաբիրինթ է, Ու տեսանողն է հսկում անտես, Ծանր պայքար է իմ ու իմ միջև, Հաղթողը ես եմ, պարտվողը՝ ես:

Կեսգիշերային մտատանջություն Եվ կյանքն ուղղելու անհաջող փորձեր, Մեկը փողոցում երգում է խաչոտ, Երևի մի քիչ ավել է կոնծել...

Նրան ի՞նչ՝ կյանքը ինչպես է գնում, Ու թքած ունի խորհողի վրա, Գինու փող լինի և մի խոսք անկյուն, Սա է անկրկին դրախտը նրա...

Նայում Բարձրյալը իր ստեղծածներին Եվ չի իմանում՝ ծիծաղի թե լա... Գնա՛նք, Տե՛ր Աստված, նրա ետևից, Գուցե խմելու դեռ բան ունենա:

Իսկ գինարբուքը Օգնում է մի քիչ, Թող մշուշոտվեմ, Չհիշեմ ոչինչ...

Թող գինին գործի Որպես բալասան, Եվ պարբերաբար Խռովի մուսան...

Հրձիգները իսկ Թող անգործ ննջեն, Պոետներն իրար Նախանձոտ ջնջեն...

Թող որ մոռանամ Ամենքին և ինձ... Չէ՛, գինարբուքը Փրկում է մի քիչ:

Սա ժամանց չէր, խաղ չէր սա, Կեղծ գովազդ ու խաբ չէր սա, Հավատամքով ապրված Բանաստեղծի կյանք էր սա:

2020 թ. գ. Ակներ



Հակոբ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Այն մասին, թե ինչպես Հայաստանում սկսեցին ծնվել գերբնական հատկություններով օժտված հրաշամանուկներ կամ գեներտիկ պայթյուն

(Էսե)

N թվականին, երբ Հայաստանը համայն հայության գերագույն ճիգերով հաղթահարել էր իր գոյությանը սպառնացող հերթական ռազմական ինտերվենցիան և մեջքն ուղղելով աննկատ բռնել էր աշխարհի ամենակրթված, ամենազարգացած, ամենահզոր, ամենաարդար երկիրը դառնալու ուղին, Մարդկության Զարգացման Ապահովման Կազմակերպության (ՄԶԱԿ) պաշտոնյան, որի խնդիրը մտավոր բարձր կարողություն ունեցող երեխաներին հայտնաբերելն ու համապատասխան ոլորտներ ուղղորդելն էր, դպրոցական օլիմպիադաների մրցանակակիրների ցուցակներն ուսումնասիրելիս զարմանքով նկատելով, որ մրցանակակիրների մեջ տարեցտարի աճել է հայ երեխաների թիվը, իսկ վերջին տարում բոլոր մրցանակներն առանց բացառության բաժին են հասել նրանց, որոշեց այդ անհավանական երևույթի պատասխանն ստանալ Հայաստանի ներկայացուցչից և նրան իր մոտ հրավիրելով՝ հարցրեց...

- Ներեցեք, պարո՛ն,- ես նկատել եմ, որ արդեն բավական ժամանակ է՝ հայերն սկսել են աստիճանաբար գերիշխող դիրք գրավել դպրոցական օլիմպիադաներում և մեդալների արժանանալ՝ հետզհետե մեծացնելով նաև դրանց թիվն ու հարգը, իսկ այս տարի բոլոր մեդալները բաժին են հասել հայերին: Խոստովանե՛ք, որ դա խիստ անբնական, ուղղակի ֆանտաստիկայի ժանրին պատկանող երևույթ է: Ենթադրություն կա, որ հայերն օգտագործում են մտքի աշխատանքը գերակտիվացնող ինչ-որ խթանիչ դոպինգ, որը ժամանակակից հակադոպինգային մեթոդներով դեռ հնարավոր չէ բացահայտել: Բայց դուք շատ լավ գիտեք, որ այդպես անվերջ շարունակվել չի կարող: Գիտությունը զարգանում է, մեր հակադոպինգային մարմիններն աշխատում են այդ ուղղությամբ, չե՞ք վախենում, որ կգա ժամանակը, երբ կբացահայտվի նաև ձեր օգտագործած դոպինգի գաղտնիքը, և ձեր երկիրը ոչ միայն կզրկվի նվաճած բոլոր մեդալներից ու տիտղոսներից, այլև ուղղակի խայտառակ կլինի և անարգանքի այունին կգամվի համայն մարդկության կողմից:

- Ո՛հ, չենք վախենում,- անվրդով պատասխանեց Հայաստանի ներկայացուցիչը: - Ուրեմն խոստովանո՞ւմ եք, որ մինչ այս անհայտ խթանիչ եք օգտագործում,- ձայնագրիչը թաքուն միացնելով ու մտքում քմծիծաղելով խայծը կուլ տված հայի միամտության վրա՝ շարունակեց պաշտոնյան: - Դե, եթե գեներտիկ պայթյունը և այն առաջացնող ազդակը կարող են արգելված խթանիչ համարվել, դուք էլ համարեք, որ այդպես է,- փոքր-ինչ տխուր, բայց նույնքան անվրդով ասաց հայը: - Ի՞նչ,- ականա բացականչեց պաշտոնյան,- ի՞նչ գեներտիկ պայթյուն, դա ի՞նչ է:

Շարունակությունը՝ էջ 8

Ֆանտաստիկ պատմություններ - 14

Սկիզբը՝ էջ 7

- Կարող եք համարել, որ դա հայ մարդու համար խաղացել է որակական նոր մակարդակի հասնելու նույն դերը, ինչ մեծ պայթյունը՝ տիեզերքի համար,- նույն հանդարտությամբ շարունակեց հայն ու հարկ համարեց ավելացնել,- անշուշտ գիտեք, որ տեսություններից մեկի համաձայն, տիեզերքի առաջացումն ու կյանքի ծագումը մեծ պայթյունի հետևանք է: Այսինքն, եթե դատենք հակառակ տրամաբանությամբ, կարող ենք հետևեցնել, որ այդ պայթյունը տեղի է ունեցել կյանքին սկիզբ տալու համար, դա է եղել ազդակը: Նույն տրամաբանության տարբերակով՝ հայոց գենետիկ պայթյունն էլ մեր ժողովրդի գայության ու հարատևման գլխին կախված վտանգը հաղթահարելու և կյանքը շարունակելու ազդակի ծնունդ է: Այն ժամանակ, երբ հայության գլխին հերթական անգամ կախված էր բնաջնջման վտանգը, իսկ աշխարհը, ինչպես ձեր կենսափորձով գիտեք, հերթական անգամ կույր ու անհաղորդ էր այդ ամենին, և հայ ժողովուրդը տեսավ ու գիտակցեց, որ իր մեջ պիտի գտնի այդ արհավիրքին դիմակայելու կարողությունը, համախմբվեց, ի մի բերեց իր կենսունակության ողջ ներուժը, ամբողջությամբ վերածվեց գոյամարտի և մի հավաքական, ֆանտաստիկ ճիգով փոխեց, կատարելագործեց իր գենետիկ կոդն ու սկսեց լույս աշխարհի բերել գերբնական հատկություններով օժտված երեխաներ, որոնց միտքը կարող է կատարել հայտնագործություններ, ինչի մասին մարդկությունը պատկերացում իսկ չունի, իրագործել նպատակներ, որոնք անհնար են հզորագույն ժողովուրդների համար անգամ, ի հայտ բերել ու կյանքի կոչել մտավոր ու հոգևոր այնպիսի որակներ, որոնց շնորհիվ կարող է հասնել անհասանելի թվացող բարձունքների: Եվ այդ, նրանց այլևայլ գերբնական հատկություններն այնքան զորեղ են, որ, օրինակ, մտքի ալիքներով կարող են տիեզերանավեր վար բերել, փոխել քամիների կամ հրթիռների ուղղությունը կամ բազմապատիկ ավելացնել հողի բերքատվությունը...

- Ես հուսով եմ, որ հայ ժողովուրդը հավատարիմ կգտնվի իրեն բնորոշ հումանիստական արժեքներին և այդպիսի մարդկանց կարողությունները կծառայեն ի հանուն մարդկության բարօրության,- հեզնեց պաշտոնյան:

- Իհարկե,- պատրաստակամորեն արձագանքեց հայը,- բայց նրանց ուժը նախ և առաջ հոգուտ մեզ օգտագործելով: Քանզի պարզ է արդեն, որ ինչ օգտակար է հայի համար, դա է մարդկության համար օգտակարը, և դա է մարդկության ճշմարիտ բարօրությունը: Գերբնական հատկություններով օժտված մեր երեխաները ռազմիկներ են լինելու՝ հայության և համամարդկային արդարության ռազմիկներ:

Մարդկությունը դեռ չի հասել գիտակցությանը և ազատ կամքով արդարություն հաստատելու մակարդակին, մենք դա կհաստատենք ստիպողաբար: Եվ մեր ժողովուրդն արդեն իսկ ապրում է այդ առաքելությամբ:

- Եվ ի՞նչ, ձեր բոլոր երեխաները գերբնական արարածներ են,- ծաղրական հարցրեց պաշտոնյան:

- Երևի չնկատեցիք, որ գերբնական հատկություններով օժտված երեխաների մասին խոսելիս ես ակնարկեցի, որ նրանք սաղմնավորվել ու լույս աշխարհ են եկել ցավից ու ցասումից ծնված կենսական անհրաժեշտությունից, ինչը նրանց գենետիկ շղթայում զարգաց-

ման նոր՝ ուրույն օղակ է զարգացրել: Բացատրեմ ավելի մանրամասն: Սկզբում եղել է այսպես. ծայրահեղ վիճակից ելք որոնելիս գիտակցելով, որ մեր միակ հարստությունը մեր մտավոր կարողությունն է, մենք ստեղծեցինք այն զարգացնելու, կատարելագործելու և գործնականում օգտագործելու նախադրյալներ, աննկարագրելիորեն զարգացրինք կրթությունը, գիտությունը, ամեն ինչ: Ստեղծեցինք կատարյալ կառույցներ: Համախմբեցինք մեր ժողովրդի ողջ ներուժը և նպատակամղեցինք հայրենիքի փրկության գործին: Բազում այլ բաներ արվեցին: Եվ այդ ամենը հետզհետե ազդեց մեր գենետիկ կառուցվածքի վրա: Եվ երեխաներն սկսեցին լույս աշխարհի գալ ասես ի ծնե աստվածային շնորհով օժտված: Բայց նրանց մեջ կան առավել օժտվածները, որոնք իրոք գերբնական հատկություններ ունեն, և այդտեղ իրոք գերբնական նախադրյալ կա, որը նույնպես չէք նկատում:

- Խոսքը ինչի՞ մասին է,- լարվեց պաշտոնյան:

- Չե՞ք նկատել, որ ձեր ձեռքի ցուցակի ազգանուններից շատերում նոր բաղադրիչ է հայտնվել՝ Սեպուհ:

- Իսկ դա ի՞նչ է նշանակում և ի՞նչ կապ կարող է ունենալ ձեր հավակնոտ հայտարարությունների հետ,- չհանձնվեց պաշտոնյան:

- Շատ մեծ: Իմացեք, որ դա ազնվական տիտղոս է, որը հնում շնորհվում էր ազնվազարմ տոհմերի կրտսեր զավակներին, ովքեր կոչված էին զինվորական ծառայության: Գիտեք, բոլոր ժողովուրդների մեջ էլ ազնվականներն են ռազմի հիմնական ուժը: Հայ ազնվականությունը՝ նույնն է, թե հայ զինվորականությունը, հին աշխարհի լավագույն ռազմիկներից էր, որի պարտքն ու պարտականությունը հայրենիքը պաշտպանելն էր: Եվ շատերն են ընկրկել նրա հզոր բազկի հարվածներից, երկյուղել ու հրաժարվել Հայաստանը զավթելու մտքից անգամ: Բայց եղան խորամանկ ու նենգ զավթիչներ, տիրակալներ, որոնք Հայաստանը թուլացնելու համար որոշեցին վերացնել կամ մաշելով սպառել հայ ազնվականությունը: Որոշ զավթիչներ նրանցից գնդեր կազմեցին և ուղարկեցին իրենց կայսրության հեռավոր սահմանները, որպեսզի և՛ իրենց սահմանները պաշտպանեն, և՛ հայ դիմադրողական ուժը նվազեցնեն (թե սպանեն՝ թշնամի կսպանեն, և թե սպանվեն՝ թշնամի կսպանվի, մտածում էին նրանք և իրենց հայտնագործությունը կհսում նույնիսկ թշնամիների հետ): Որոշ զավթիչներ էլ պարզապես սկսեցին սպանդի ու նախճիրի ենթարկել հայ ազնվականներին, վերացնել նրանց տոհմն ու տեսակը: Եվ մաշվեցին նրանք, և իրոք թուլացավ հայոց դիմադրողական զորությունը:

Զորությունը թուլացավ, բայց ոգին չէր թուլացել, և վերջին հերոսամարտի ժամանակ հայը ամբողջովին նվիրվեց հայրենիքի պաշտպանության սուրբ գործին և իրեն պահեց ճշմարիտ ազնվազարմ ռազմիկի նման: Եվ այդժամ ժողովուրդը որոշեց ազգանուններում ամրագրելով՝ սեպուհի տիտղոս շնորհել այդ պատերազմի բոլոր մասնակիցներին, որպեսզի և՛ գնահատվի նրանց ծառայությունը, և՛ վերականգնվի հայոց ազնվականությունը, ու հայրենիքին նվիրաբերվելու նրա բնույթը վերստին դառնա ժառանգական: Եվ նախնիների ոգին փոխանցվեց նրանց, և վերածնվեցին հայոց նո-

րոյա ազնվական տոհմերը, որոնք առավել էին, քան երբևէ եղածները: Եվ ծնվեցին մանուկներ, որոնց մեջ ազնվազարմ ռազմիկի կոչվածությունը աներևակայելի զորություններ արթնացրեց, և նրանք առաջինն են ամենուր: Այդ պատճառով էլ ահա ձեր ձեռքի ցուցակում գրեթե բոլորը սեպուհներ են, և, տեսնում եք, օրինակ, Սասուն Էրզրարի Սեպուհ-Մարգարյան կամ Խաչիկ Կոմիտասի Սեպուհ-Սաֆարյան և նմանատիպ բազում այլ ազգանուններ:

Բայց սա դեռ ամենը չէ: Մեր մեջ ի հայտ եկան իսկապես գերբնական ծնունդներ, և գենետիկ պայթյունը տեղի ունեցավ հենց նրանց շնորհիվ: Եվ այսպես եղավ դա. այդ պատերազմի ժամանակ բազում էին նրանք, ովքեր զոհասեղան ելան դեռ ամուսնական առագաստ չտեսած, անպտուղ և անժառանգ: Բայց նրանք ավելի մեծ փառքի ու անմահության են արժանացել և նրանց էլ հետմահու է շնորհվել սեպուհի տիտղոս: Եվ ավանդույթ ձևավորվեց, որ հայոց կույս օրհորդներն սկսեցին ամուսնանալիս ուստի գնալ զոհվածների շիրիմներին և նրանց միջից իրենց համար փեսացու ընտրել, երկնային ու հոգևոր ամուսնությամբ միավորվել նրանց հետ, ապա նոր միայն գնալ երկրային պսակի տակ: Եվ իրոք հրաշք տեղի ունեցավ. հոգևոր հայրերի ոգին վերաբնակվեց այդպիսի ամուսնություններից սաղմնավորված պտուղների մեջ, և գենետիկ պայթյունը հենց նրանց մեջ զորեղացավ: Եվ իմացեք նաև, որ նրանց առաջնեկները երկվորյակ արու զավակ էին ծնվում, ոչ թե օրով մեծանում, այլ ժամով, և ի հայտ բերում հիրավի ֆանտաստիկ կարողություններ, որոնց շնորհիվ էլ ահա տեսնում եք, թե ինչ արդյունքներ են ցույց տալիս: Նկատեցի՞ք, որ այդ ցուցակում այսպիսի անուն-ազգանուններ կան՝ ահա օրինակ՝ Տիգրան Հայկի Դավթյան Սեպուհ-Արտաշես կամ Հարություն Վրեժի Առաքելյան Սեպուհ-Ավետիս և այլն: Եվ այստեղ Սեպուհ-Արտաշեսը կամ Սեպուհ-Ավետիսը նրանց հոգևոր հայրանունն է: Ահա և իմացեք, որ այդ հոգևոր հայրերի անձին զավակների աղաղակն է նրանց մեջ գենետիկ պայթյուն առաջացրել: Այդպես շարունակվում է առ օրս. գնում են հայոց կույսերը այդ երիտասարդ ու կույս նահատակների գերեզմաններին, օրինակ, հայ ռազմիկների Եռաբլուր պանթեոն, հոգևոր ամուսին ընտրում, ապա նոր դիմում մարմնական ամուսնության: Ասեմ նաև, որ այդ ծնունդները վերը նշված արժանիքներից զատ օժտված են միմյանց հեռագալու, հասկանալու և արձագանքելու, միավորվելու, համախմբվելու, կազմակերպվելու, նպատակասլաց ու կուռ նվիրաբերվելու զարմանահրաշ կարողությամբ, ինչի շնորհիվ էլ ահա անգերազանցելի նվաճումների են հասնում բոլոր բնագավառներում:

Եվ ահա հենց սա է այն խթանիչը՝ դոպինգը, որը դուք ուզում եք հայտնաբերել: Այնպես որ, խնդրում եմ, այլ ջանքեր մի՛ գործադրեք և պատրաստ եղեք ձեզ համար անհավատալի նորանոր՝ ֆանտաստիկ թվացող իրողությունների:

## ՀԱՅ ՌԱԶՄՄԻԿԸ ՉԻ՞ ՊԱՐՏՎԵԼ

պաշտպանության բանակը կռվում է Ադրբեյջանի ու Թուրքիայի հրոսակների դեմ, կռվում է հերոսաբար, անձնուրաց, շատ դեպքերում էլ՝ հաղթում: 44 օր շարունակ նրանք ծայրաստիճան դժվար պայմաններում մարտնչեցին թշնամու ոհմակների դեմ:

Վասն հայրենյաց նահատակվեցին, իրենց ջահել-ջիվան կյանքը հայրենիքին ընծայեցին հարյուրավոր ու հազարավոր հայ քաջորդիներ: Հավերժ փառք ու խոնարհում նրանց հիշատակին, համբույր՝ մեր նոր Թաթուլների, Վազգենների, Մոնթենների շիրիմներին:

Արցախյան ռազմաճակատի տարբեր հատվածներում, մարտերի ժամանակ անհետ կորան տասնյակ

ռազմիկներ: Փառք մեր Անհայտ զինվորներին:

*Թե՛՛ մարտերում զոհվեցին մեր Կորյունները ջահել-ջիվան, Նրանց արյամբ, Հայրց Արցախ, Պիրի ծաղկի քո ապագան...*

### Պատերազմը դեռ չի ավարտվել

Գնալով ավելի ու ավելի է ահագնանում թուրքական վտանգն ու սպառնալիքը Կովկասում: Թուրքիան ձգտում է ամրապնդել իր դիրքերը Կովկասում, դուրս մղել Ռուսաստանին, իրականացնել օսմանյան սուլթանների երազանքը՝ Կովկասը, Միջին Ասիան նվաճելով՝ ստեղծել թուրքական-իսլամական հզոր կայսրություն: Չի բացառվում, որ Անկարայում ծրագրեր

են մշակվում կործանելու հայոց պետականությունը, ստրկացնելու հայ ժողովրդին:

Ներկա դրությամբ Թուրքիան զորքեր է կուտակել Ադրբեյջանում, ՀՀ հարավարևմտյան սահմանների մոտ, Իգդիրի կողմերում, իսկ Ադրբեյջանը՝ Սյունիքի սահմանների մոտ: Չի բացառվում, որ առաջիկայում Նախիջևան-Ադրբեյջան ճանապարհի կառուցման պատճառով (ճանապարհ, որ անցնելու է Սյունիքի տարածքով) մենք կորցնենք Մեղրին, հարակից տարածքները:

Սիրելի՛ հայրենակիցներ, հայ ժողովրդի համար ճակատագրական օրեր են, ժամեր, րոպեներ ու վայրկյաններ: Երկպառակությունը, ներքաղաքական կյանքի անկայունությունը կարող են մեզ կործանման տանել:

Դասեր քաղենք մեր սխալներից, վրիպումներից, պարտություններից և մտածենք մեր զավակների, թոռների ու ծոռների ապագայի մասին:

Համախմբենք մեր ուժերը, լինենք միասին:

**Գրական Թերթ**      Գլխավոր խմբագիր՝ **Կարինե ԽՈՒԴԻՎՅԱՆ**

ԻՄՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. **Նորայր Աղայան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Գեմիրճյան, Անիտա Դուրխանյան, Ազատ Եղիազարյան, Գուրգեն Խանճյան, Մամիկ Կոստյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Մարիքեկյան**

Հրատարակում է «ԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրությունը» ՍՊԸ- ճ: Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ: Տպաքանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ: *Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտասպառքյան դեպքում հորմը «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունը իրականացրել է «Լան ԱՐՅԱՆ» ՍՊԸ- ճ: ՀԳՄ «Լ. Չ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:*

**0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru, grakantert@gmail.com**